

## Հանրահաշիվ 7. N 480

Երբ ուղղանկյունաձև դահլիճի շարքերի թիվը ավելացրին երկուսով, իսկ յուրաքանչյուր շարքում տեղերի թիվը՝ երեքով, դահլիճում տեղերի թիվը դարձավ 77: Քանի՞ շարք կար սկզբում դահլիճում, եթե դրանց թիվը ավելին էր, քան մեկ շարքում եղած տեղերի թիվը:

**Լուծում:** Եթե սկզբում դահլիճի շարքերի թիվը նշանակենք  $x$ , իսկ մեկ շարքում տեղերի թիվը՝  $y$ , ապա կունենանք  $(x + 2)(y + 3) = 77$ :  $77 = 1.77 = 7.11$ : Քանի որ  $x$ -ը և  $y$ -ը բնական թվեր են և  $x > y$ , ապա հնարավոր է միայն  $x + 2 = 11$ ,  $y + 3 = 7$ : Այսինքն՝  $x = 5$ ,  $y = 4$ :